Արձանագրություն N 3

ՀՀ Արագածոտնի մարզի Կարբի համայնքի «Կարբիի բժշկական ամբուլատորիա» ՀՈԱԿ -ի կարիքների համար «ՀՀԱՄ-ԿԲԱ–ԳՀԱՊՁԲ-19/02» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հայտերի գնահատման նիստի մասին

Գ. **Կարբի** «15» փետրվարի 2019թ.
Ժամը՝ 10:00

Մասնակցում էին՝

Գնահատող Հանձնաժողովի նախագահ՝	**Ս. Ավետիսյան** -	«Կարբիի բժշկական ամբուլատորիա» ՀՈԱԿ-ի գլխավոր հաշվապահ
Հանձնաժողովի անդամներ՝		
	Ա. Արամյան -	«Կարբիի բժշկական ամբուլատորիա» ՀՈԱԿ-ի ընտանեկան բժիշկ
	Ս. Ասատրյան -	«Կարբիի բժշկական ամբուլատորիա» ՀՈԱԿ-ի թերապևտ
Գնումները համակարգող՝	**Ս. Շահինյան**	

Օրակարգ

1. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված եզրակացության մասին

1. Ընդունել ի գիտություն որ.

1.1 «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի /այսուհետ՝ Կարգ/ 43-րդ կետի 3-րդ ենթակետի՝ հարցում էր ներկայացվել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների և «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին վերաբերող հրավերով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից սահմանված ժամկետում ստացվել է դրական պատասխան՝ այն է մասնակիցը չունի ժամկետանց հարկային պարտավորություններ

1.2 Ընթացակարգի առաջին տեղ զբաղեցնող ճանաչված մասնակիցների կողմից էլեկտրոնային կայքի միջոցով հրավերով սահմանված ժամկետում ներկայացրել են որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, ինչպես նաև գնման առարկաների իրենց կողմից առաջարկված տեխնիկական բնութագրերը, որոնք գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել են հրավերի պահանջներին համապատասխան:

2. Գնանշման հարցման ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների հաստատման մասին

Հիմք ընդունելով սույն արձանագրության 1-ին կետը՝ հանձնաժողովը որոշեց հաստատել գնանշման հարցման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների հայտերը գնահատել բավարար:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ - 0:

«ՀՀԱՄ-ԿԲԱ–ԳՀԱՊՁԲ-19/02» ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակցի և պայմանագիր կնքելու որոշում ընդունելու մասին

3.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 2-րդ կետով ընդունած որոշումը՝

- **«ՀՀԱՄ-ԿԲԱ-ԳՀԱՊՁԲ-19/02»** ծածկագրով ընթացակարգի 1, 2, 3, 4, 5, 6, 7, 8, 9, 12, 13, 14, 15, 16, 17, 18, 19, 20, 21, 22-ին չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցրած /ընտրված/ մասնակից է ճանաչվում «Արև Լևոնյան» ԱՁ-ն, որպես ընթացակարգի բավարար գնահատված հայտ և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից:

3.2 Համաձայն ՀՀ Գնումների մասին օրենքի 10-րդ հոդվածի՝ սահմանել անգործության ժամկետ 5 օրացուցային օր, հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և անգործության ժամկետի ավարտից հետո հաղթող մասնակցին տրամադրել պայմանագրի նախագիծը:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ - 0:

4. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին

4.1 Ընթացակարգի արդյունքների ամփոփման համար, հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել մասնակցի հետ պայմանագիր կնքելու հաջորդ աշխատանքային օրը՝ ժամը 11:00-ին, **«Կարբիի բժշկական ամբուլատորիա» ՀՈԱԿ-ի շենքում**

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ - 0:

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ _____ **Սաթիկ Ավետիսյան**

հանձնաժողովի անդամներ՝ _____ **Արգինե Արամյան**

_____ **Սաբրո Ասատրյան**

Գնումները համակարգող՝ _____ **Սոս Շահինյան**